ւանի մերոյ։ Եւ վաղիւն դարձեալ մտցուք ի յայրն և հաւաստեաւ ստուգեսցուք զքանս, եթէ այն է՝ զոր Տէր եցոյց մեզ։ Եւ գնացեալ ի բնակութիւնս իւրեանց, կացեալ խնդութեամբ և ուրախութեամբ մինչեւ ցառաւօտն, և ի վաղիւն յարուցեալ գացին մինչեւ ի դուռն այրին, և մտեալ թագաւորացն մի ըստ միոջէ տեսանէին, և ծանուցաւ նոցա։ Եւ նոքա այնպէս ցնծութեամբ սրտիւ բերկրեալ ուրախ լինէին։ Եւ եկեալ խնդութեամբ մեծաւ և սիրով պատմէին զօրացն ամենեցուն, եթէ արդարև այն Աստուած է նա և որդի Աստուծոյ, որ իւրաքանչիւր նուիրացն՝ զոր մատուցաք նմա. զնոյն տեսութիւն կերպարանաց երևեցաւ մեզ, և զողջոյն և զպատիւս մեր սիրով եւ խաղաղութեամբ ընկալաւ ի մէնջ, և հաւատացին թագաւորքն և իշխանքն և ամենայն բազմութիւնք զօրացն, և ժողովք՝ որք էին անդ։

Եւ դարձեալ Մելգոն թագաւորն առեալ զգիր կըտակին, զոր ունէր ընդ իւր պահեալ յառաջին նախահարց անտի՝ որ ասացաք. և տարեալ մատուցանէր առաջի մանկանն և ասէր. ահա նամակ գրոյն, զոր կնքեալ և փակեալ ետուր մեզ ի պահեստի, ա՛ռ եւ ընթերցիր զգիրս հաւաստեաւ զոր գրեալ ես։ Եւ գիր գրոյն՝ որ գրեալ և կնքեալ կայր ի պահեստի, զոր մոգք ոչ համարձակեցան բանալ գիրն և տալ ումեք ընթեռնուլ քահանայիցն և կամ ժողովրդեանն լսել, զի ոչ էին նոքա արժանի լինիլ որդի արքայութեան, զի ուրացողք լինելոց էին Փրկչին...։

Արդ յետ ելանելոյն Ադամայ ի դրախտէն, և Կայինի՝ որ եսպան զԱբէլ, և սուգ առեալ Ադամ ի վերայ մահուան որդւոյ իւրոյ՝ քան զելանելն նմա ի դրախտէն, և ետ Տէր Աստուած՝ Ադամայ որդի զՍէթ